## ԲԱԶՄԱՎԱՍՏԱԿ ԳԻՏՆԱԿԱՆԸ

(Հայկական ՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Բաբկեն Առաքելյանի ծննդյան 60-ամյակի առթիվ)

Անվանի հայագետ, Հայկական ՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ, պատմական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Բաբկեն Առաքելյանը բոլորում է իր կյանքի վաթսուն տարին: Նրա բազմաթիվ մենագրությունները և շուրջ հարյուր հոդվածները՝ նվիրված հայոց պատմության, նյութական մշակույթի և արվեստի պատմության հարցերին, գիտական մնայուն արժեքներ են:

Բաբկեն Առաքելյանը ծնվել է 1912 թ. Հոկտեմբերյանի շրջանի Մրգաշատ գյուղում: Նախնական կրթությունն ստանալուց հետո ավարտել է Երևանի գյուղատնտեսական ուսումնարանը: 1933—1938 թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում: 1936—1937 և 1937—1938 ուսումնական տարիներին Բ. Առաքելյանը Լենինգրադի համալսարանի ազատ ունկնդիր էր, միաժամանակ պարապում էր պետական Էրմիտաժում: Այստեղ էլ նրան նկատեց ակադեմիկոս Հովսեփ Օրբելին և օգնեց ապագա գիտնականին:

1938 թ. Առաքելյանն ընդունվում է ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական բաժանմունքի պատմության ինստիտուտի ասպիրանտուրան և ձեռք բերելով ընդարձակ գիտելիքներ, հանդես է գալիս հայ ժողովրդի IV—VII դդ. պատմությանը և մշակույթին նվիրված մի շարք հոդվածներով: 1941 թ. պաշտպանելով թեկնածուական դիսերտացիա, մեկնում է ճակատ: 1949 թ. լույս է տեսնում Բ. Առաքելյանի «Հայկական պատկերաքանդակները IV—VII դդ.» աշխատությունը, որտեղ տրված է հայ աշխարհիկ, կրոնական, առասպելական և սիմվոլիկ բնույթի քանդակների խորը վերլուծությունը: Հայաստանի սոցիալ-տնտեսական պատմության ուսումնասիրության գծով երկար տարիներ պրպտումների արդյունք է Բ. Առաքելյանի «Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դդ.» երկհատոր մենագրությունը, որտեղ Հայաստանի պատմության ֆոնի վրա հեղինակը ամենայն մանրակրկիտությամբ լուսաբանել է միջնադարյան Հայաստանի քաղաքների առաջացման ու զարգացման, արհեստների, արհեստագործության մեջ տեղի ունեցած աշխատանքի բաժանման, արհեստավորական եղբայրությունների (համքարությունների), ներքին և արտաքին առևտրի, քաղաքների ներքին կյանքի, սոցիալական կառուցվածքի, դասային և դասակարգային ներհակությունների հարցերը, քաղաքների անկման պատճառները:

Բ. Ն. Առաքելյանի արգասավոր գիտական գործունեության մեջ կարևոր տեղ է գրավում հնագիտական ուսումնասիրությունը: Որպես հնագետ նրա մատուցած խոշորագույն ծառայություններից մեկը հետուրարտական, վաղ հայկական հելլենիստական շրջանի նյութական մշակույթի հայտնագործումն ու բացահայտումն իմաստավորումն է: Նրա նախաձեռնությամբ է, ղեկավարությամբ ավելի քան քսան տարի է, ինչ իրականացվում են Գառնիի ամրոցի պեղումները: Ամբողջությամբ բացվել է ամրոցի պարսպապատը՝ պաշտպանական հզոր սիստեմը. հեթանոսական տաճարի ավերակների հարևանությամբ հայտնաբերվել է պալատական կառույցների խումբը՝ արքայական հանդիսասրահի, դղյակին բնակելի շենքի, խճանկար հատակ ունեցող բաղնիքի ավերակները, պեղ-

վել է Գառնիի հայտնի դամբարանադաշտը: Գառնիի պեղումների արդյունքներին են նվիրված Բ. Առաքելյանի երեք գրքերը, որոնցից առաջինը և երկրորդը թարգմանվել և 1965-ին հրատարակվել են ԱՄՆ-ում (անգլերեն): Գերմանական «Klio» հանդեսում, տակավին 1959-ին տպագրվել է Բ. Առաքելյանի «Мозаичный пол бани в крепости Гарни» աշխատությունը:

Բ. Առաքելյանի ղեկավարությամբ են կատարվում Արմավիրի (1962 թ.) և Արտաշատի (1970 թ.) պեղումները:

Հինավուրց քաղաքատեղիների պեղումներով երևան են եկել միջնաբերդերի պաշտպանական սիստեմները, մոնումենտալ շենքերի, բնակելի կառույցների, արհեստանոցների հիմնապատերը: Հայտնաբերվել են բազմապիսի նյութեր, արվեստի հուշարձաններ, որոնք ներկայացնում են հայ ժողովրդի կազմավորման ավարտի, նայ պետականության առաջացման, հարևան երկրների հետ քաղաքական, տնտեսական և մշակութային սերտ աղերսներ ունեցող, սեփական ինքնատիպ հելլենիստական մշակույթ կերտող Հայաստանի ստրկատիրական մշակույթը:

Բազմավաստակ գիտնականի ծառայությունների շարքում կարևոր տեղ են գրավում նաև Հայաստանի վաղ հայկական և հելլենիստական մշակույթի էական բնորոշ առանձնահատկությունների բացահայտումը՝ «Հին Հայաստանի նյութական մշակույթի հիմնական գծերը» (1900), «Հին Հայաստանի մշակույթի ուսումնասիրությունը» (1963), «Որտեղ են գտնվել Երվանդաշատ և Երվանդակերտ քաղաքները» (1965), «Արմավիրի պեղումների նշանակությունը հայ հին մշակույթի ուսումնասիրության համար» (1966), «Արմավիրի հնագիտական պեղումների մի քանի արդյունքները» (1969) ուսումնասիրություններում: Գառնիի, Արմավիրի, Արտաշատի նրա ղեկավարած պեղումները հրսկայական նյութ մատակարարեցին հայ ժողովրդի հին պատմության ուսումնասիրությանը, մեծապես նպաստեցին Հայաստանում ստրկատիրական հասարակարգի գոյության տեսակետի հիմնավորմանը:

Բ. Առաքելյանը սոսկ պատմաբան և հնագետ չէ, այլև մշակույթի, արվեստի հմուտ պատմաբան: Հայ ժողովրդի քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակույթի պատմության չմշակված պրոբլեմներին է նվիրված Բ. Առաքելյանի «Կոչիկը որպես սոցիալական տերմին», «Ժամանակագրական դիտողություններ», «Հայաստանը արաբական տիրապետության առաջին շրջանում և հայերի պայքարը անկախության համար», «Հայերի ապստամբությունը արաբական լծի դեմ 703 թվին», «Շահագործման մի ձև Հին Հայաստանում», «Վանաձն Վիշապաքաղաքի մասին», «Հայոց պատմության մի քանի հարցերի քննարկումը Ն. Մառի աշխատություններում», «Գառնիի խճանկարը», «Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակը IX—XIII դդ. և վերածնության հարցը», «Քաղաքային բնակչության սոցիալական կազմը Հայաստանում IX—XIII դդ.», «Կազմերի զարդարման արվեստը միջնադարյան Հայաստանում», «Հին Հայաստանի մշակույթը», «Հայաստանի վաղ ֆեոդալական արվեստը», «Հին Հայաստանի ապակին» և այլ աշխատություններ:

Առաքելյանի գիտական հետաքրքրությունների մեջ կարևոր բնագավառ են Հայաստանի արվեստն ու մշակույթն իրենց տարբեր կողմերով: Հայագիտության մեջ կարևոր ներդրում են „Клад серебряных изделий из Эребуни" („Советская археология", 1971, № 1), «Քանդակագործությունը Հին Հայաստանում», «Հին Հայաստանի մշակույթը», «Հայաստանի վաղ ֆեոդալական դարաշրջանի արվեստը», «Կազմերի զարդարման արվեստը միջնադարյան Հայաստանում» և այլ աշխատություններ: Մ. թ. ա. VI դ. մ. թ. VII դ. հայ արվեստի պատմությանն է նվիրված Բ. Առաքելյանի ընդհանրացնող մենագրությունը, որը պատրաստվում է հրատարակության:

Բ. Առաքելյանն իբրև քաղաքացի և եռանդուն հասարակական գործիչ միշտ ընթացել է իր ժողովրդի նկատմամբ պարտականության գիտակցության և նվիրվածության ճանապարհով: Հայրենական պատերազմի առաջին օրերից, նա կամավոր մեկնում է ռազմաճակատ, անցնելով մարտական մեծ ուղի՝ Հյուսիսային Կովկասից մինչև Բեռլին: Իրեն կրկին նվիրաբերելով գիտությանը, նա ստանձնում է ակադեմիայի հասարակական գիտությունների բաժանմունքի գիտնական քարտուղարի պաշտոնը, խմբագրում «Տեղեկագիրը», 1959 թ. ստանձնում «Պատմա-բանասիրական հանդեսի» պատասխանատու խմբագրի տեղակալի պարտականությունը: Գիտնական-քաղաքացին ջերմորեն մասնակցում է հայագիտության հետ աղերսվող բոլոր միջոցառումներին, մեր մշակույթի պրոպագանդման հարցերին: Նա իր գործոն մասնակցությունն է բերել հայ ժողովրդի պատմության, գիտական, ուսումնական ձեռնարկի ստեղծման պատվավոր գործին: Բ. Առաքելյանը «Հայ ժողովրդի պատմության» խմբագիրներից և հիմնական հեղինակներից մեկն է:

1968 թ. Բ. Առաքելյանն ընտրվում է Հայկական ՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ: Աշխատելով որպես հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի տեղա-

կալ. նա գործոն մասնակցություն է ունենում հայագիտության հետ առնչվող բոլոր հարցերում: Նշանակալի է Բ. Առաքելյանի գիտամանկավարժական գործունեությունը: Նա 1950 թ. սկսած մինչև օրս Հայոց պատմության և Հայաստանի հնագիտության դասընթացներ է կարդում Երևանի պետական համալսարանի պատմության, բանասիրության ֆակուլտետներում, Վ. Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների մանկավարժական ինստիտուտում:

Բ. Առաքելյանը միշտ էլ հոգատարությամբ է տնօրինել իր աշակերտների աշխատանքները և այժմ էլ եռանդով շարունակում է գիտական կադրեր պատրաստելու իր երախտաշատ գործը:

1949 թ. Բ. Առաքելյանը նշանակվում է ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի հնագիտության և վիմագրության բաժնի վարիչ, որը նրա ջանքերով դառնում է ինստիտուտի գիտական կարևոր օջախներից մեկը: 1959 թ. մինչև օրս նա անընդմեջ գլխավորում է հնագիտության և ազգագրության ինստիտուտը: Նրա ղեկավարությամբ ինստիտուտը դարձել է ստեղծագործական եռուգեռով ապրող բազմանյուղ գիտական հաստատություն:

Բ. Առաքելյանի նախաձեռնությամբ ստեղծվել և հրատարակվում են «Հնագիտական պեղումներ Հայաստանում», «Հայաստանի հնագիտական հուշարձանները», «Դիվան հայ վիմագրության», «Հայ ազգագրություն և բանահյուսություն» մեծ ընդունելության արժանացած մատենաշարերը: Վաստակաշատ գիտնականին միշտ էլ բնորոշ է եղել գիտական, հասարակական խնդիրներին անմիջականորեն արձագանքելը:

Բ. Ն. Առաքելյանն իբրև հանրապետական, միութենական և միջազգային գիտաժողովների պատվիրակ հանդես է եկել գիտական զեկուցումներով, հաղորդումներով: Նա մասնակցել է նաև արևելագետների XXV կոնգրեսին Մոսկվայում, պատմաբանների միջազգային XI և XIII կոնգրեսներին Ստոկհոլմում և Մոսկվայում, Փարիզում կայացած դասական հնագիտության VIII կոնգրեսի և գիտական այլ համաժողովների: 1967 թ. Բ. Ն. Առաքելյանը Հայաստանի հնագիտության բնագավառում ունեցած նվաճումների մասին զեկուցում է կարդացել Իտալիայում՝ Միլանի համալսարանում և Վենետիկի Մուրատ-Ռափայելյան վարժարանում: 1970 թ. Բ. Ն. Առաքելյանը մասնակցում է Փարիզում բացված «Հայ արվեստը Ուրարտուից մինչև մեր օրերը» ցուցահանդեսին իբրև կառավարական պատվիրակության անդամ: Նա միաժամանակ Եգիպտոսի, Սիրիայի, Լիբանանի հայկական ընկերություններում, հայկական դպրոցներում կարդում է դասախոսություններ նվիրված հայոց պատմության, նյութական մշակույթի հուշարձաններին: Բ. Առաքելյանի վաստակների շարքում փոքր տեղ չի գրավում նաև խմբագրական աշխատանքը:

Կառավարությունն ու կուսակցությունը բարձր գնահատելով Բ. Ն. Առաքելյանի գիտական, գիտամանկավարժական, գիտա-կազմակերպչական և հասարակական եռանդուն գործունեությունը, նրան պարգևատրել են շքանշաններով ու մեդալներով:

Գ. Հ. ԿԱՐԱԽԱՆՅԱՆ

*ՀՍՍՀ ԳԱ «Լրաբերի» խմբագրական կոլեգիան, խմբագրությունն իրենց կողմից և ամսագրի ընթերցողների անունից նոր հաջողություններ են մաղթում խմբագրական կոլեգիայի հնագույն անդամին և ամսագրի տևական աշխատակցին՝ Բ. Ն. Առաքելյանին։*